ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2018թ. N _____- Ա

ք. Ստեփանակերտ

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ 2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողների՝ ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերի հիման վրա մատակարարված ոռոգման ջրի դիմաց «ԽԱՉԵՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերության հանդեպ գոյացած պարտավորություններն այդ հողօգտագործողների փոխարեն ենթակա են վճարման պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 06 բաժնի 3 խմբի 1 դասի «01 Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծախսային ծրագրի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորում» ծրագրով նախատեսված միջոցներից «ԽԱՉԵՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերությանը հատկացնել 7 532 400 (յոթ միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
3.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2018 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի _____-ի
N _____-Ա որոշման

ՑԱՆԿ

2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած պետական աջակցություն ստացող հողօգտագործողների

Հ/հ	*Հողօգտագործողի ազգանունը, անունը, հայրանունը (անվանումը)*	*Պայմանագրի համարը*	*Մշակվող կուլտուրայի տեսակը*	*Կարկտահարված հողատարածքի մակերեսը (հա)*	*Փաստացի ոռոգված ողամասի մակերեսը (հա)*	*Մատակարարված ոռոգման ջրի դիմաց կազմող պարտավորության արժեքը (ՀՀ դրամ)*
1	Պետրոսյան Հովիկ Շուրայի	135	ցորեն	35	15	210 000
2	Աղաջանյան Սոս Արթուրի	35	ցորեն	161	20	280 000
3	Գալստյան Արսեն Արմավիրի	115	ցորեն	50	28	392 000
4	«ՀԱՑ» ՍՊԸ	48	ցորեն	135,7	135,7	1 899 800
5	Ավետիսյան Էրիկ Վալերիկի	37	ցորեն	24	23	322 000
6	Գաբրիելյան Արա Խորենի	30	ցորեն	11,4	11,4	159 600
7	Իսրայելյան Վոլոդյա Արտաշեսի	109	գարի	10	8	112 000
8	Իսրայելյան Համլետ Սլավայի	60	ցորեն	27	15	210 000
9	Գալստյան Սուրեն Արմավիրի	111	ցորեն	35	35	490 000
10	Սառաջյան Հովիկ Կառլենի	23	ցորեն	30	20	280 000
11	Աղաբաբյան Լևոն Աղաբաբի	80	ցորեն	6,5	6,5	91 000
12	Աղաջանյան Սոս Արթուրի	35	եգիպտացորեն	68	68	816 000
13	«ՀԱՑ» ՍՊԸ	48	եգիպտացորեն	50	50	600 000
14	Գալստյան Գևորգ Արմավիրի	143	եգիպտացորեն	7	7	84 000
15	«ՀԱՑ» ՍՊԸ	48	արևածաղիկ	52	50	600 000
16	Շահրամանյան Սամվել Վլադիմիրի	179	արևածաղիկ	10	10	120 000
17	Իսրայելյան Համլետ Սլավայի	60	բանջարաբոստան	0,5	0,5	30 000
18	Հայրապետյան Նորայր Գարեգինի	120	բանջարաբոստան	1,5	1,5	90 000
19	Ստեփանյան Աշոտ Ապետի	180	բանջարաբոստան	2	2	120 000
20	Շահբազյան Էրիկ Վաչիկի	62	բանջարաբոստան	1,1	1	60 000
21	Ավանեսյան Դավիթ Վլադիմիրի	83	ցորեն	20	15	210 000
22	Կարսպետյան Կամո Էդիկի	72	ցորեն	10	10	140 000
23	Կարսպետյան Կամո Էդիկի	72	եգիպտացորեն	8	8	96 000
24	Մելքումյան Ալեքսանդր Մանվելի	75	եգիպտացորեն	10	10	120 000
	Ընդամենը			765,7	550,6	***7 532 400***

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում կարկտահարության հետևանքով տեղի է ունեցել բերքի որոշակի կորուստ, ինչի հետևանքով վնաս կրած հողօգտագործողներն ի վիճակի չեն մարելու ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերի հիման վրա մատակարարված ոռոգման ջրի դիմաց գոյացած պարտավորությունները :

«2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու և ոռոգման ջրի դիմաց առաջացած պարտավորությունները նրանց փոխարեն մարելու անհրաժեշտությամբ:

Ներկայացվող որոշման նախագծով առաջարկվում է «ԽԱՉԵՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերությանը պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացնել վնաս կրած հողօգտագործողների կողմից վճարվելիք պարտավորության գումարները:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ ֆինանսների նախարարություն
3. ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմ
4. «ԽԱՉԵՆՇԻՆ» ՓԲԸ

Նախագիծը պատրաստողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Հ. Հակոբյան***
(ստորագրությունը)

«____» _____ 2018 թ.